Կարգապահական գործ թիվ ԿԳ-15166

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 309-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/194-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև **Պալատ**) խորհուրդը (այսուհետ՝ նաև **Խորհուրդ**), ի դեմս խորհրդի անդամներ՝ Հարություն Հարությունյանի (նախագահող), Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահագն Դանիելյանին (արտոնագիր № 425) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

Քաղաքացի Դավիթ Մուրադյանը **(այսուհետ՝ Դիմող)** 28.08.2015թ. գրավոր դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատ այն մասին, որ Փաստաբան Վահագն Դանիելյանի հետ **(այսուհետ՝ Պատասխանող)** 05.03.2013թ. և 29.04.2013թ. ծառայությունների մատուցման պայմանագրեր է կնքել, որոնց համաձայն Պատասխանողը պետք է ներկայացներ իր՝ որպես հայցվորի, նաև որդու շահերը դատարաններում, սակայն դիմելու պահից անցել է շուրջ 2 տարի 6 ամիս ժամկետ, սակայն Պատասխանողից որևէ առարկայական պատասխան չի ստացել, ավելին՝ հետագա բացատրություններով Դիմողը հայտնել է, որ ըստ Պատասխանողի՝ մի գործով առկա է օրինական ուժ ստացած վճիռ, մյուսով՝ դատարանում քննվող գործ, սակայն որևէ փաստաթուղթ, ծանուցագիր իրեն չի տրվել, որպեսզի վերջինս համոզվի գործի ընթացքի մասին: Ըստ Էության, Դիմողը Պատասխանողին վերագրել է այնպիսի արարք, որի համաձայն վերջինս բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել, չի ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը, ինչպես նաև կանոնավորապես չի տեղեկացրել հանձնարարության կատարման ընթացքի մասին:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

2015 թվականի սեպտեմբերի 28-ին Պալատի նախագահի կողմից

կայացվել է «Փաստաբան Վահագն Դանիելյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 317-Ա/ԿԳ-15166 որոշումը, համաձայն որի որոշվել է.

« 1. Փաստաբան Վահագն Դանիելյանի (արտոնագիր թիվ 425) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-15166):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Դավիթ Մուրադյանին:...»:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը 30.10.2015թ. բացատրություն է տվել սույն գործով, պնդել իր պահանջը, այդ թվում ավելացրել է, որ Պատասխանողը իրեն մի քանի օր առաջ ի հավաստումն իր բարեխղճության իրեն է փոխանցել երկու հայցադիմումներ և ԵԷԴ/1646/02/14 քաղ. գործով 30.03.2015թ. վճիռ, որի համաձայն իբր Սարգիս Բաղդասարյանից հօգուտ իրեն որոշվել է բռնագանձել 2000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, 210.000ՀՀ դրամ փոխառության գումար, 100.000 դրամ փաստաբանի ծախս և 20.000 ՀՀ դրամ պետական տուրք: Հայտնել է նաև, որ Պատասխանողը պնդել է, որ նշված վճիռը ստացել է օրինական ուժ, վերցրել է կատարողական թերթ և ներկայացրել ԴԱՀԿ: Պատասխանողն իրեն ցույց է տվել վճռի բնօրինակը կնիքով և ստորագրությամբ, իր ներկայությամբ պատճենահանել այն, որի ընթացքում կնիքը չի երևացել, այլ միայն երևացել է դատավորի ստորագրությունը: Կնիքի չերևալու հանգամանքը Պատասխանողը պատճառաբանել է պատճենահանման կատարելու հանգամանքով: Այնուհետև, Դիմողը գոհ է եղել, վերցրել է վճիռը, երկու հայցադիմումները և հեռացել: Սակայն հետո մանրամասն ուսումնասիրելով նշված փաստաթղթերը, նկատել է, որ իր՝ Դավիթ, անվան փոխարեն նշված է Դավիթի, իսկ Պատասխանողի հասցեն սխալ է գրված: Այդ կասկածները փարատելու նպատակով այցելել է Դատարան և պարզել, որ նման վճիռ և հայցադիմում դատարանում առկա չեն: Կրկին այցելել է Պատասխանողի աշխատասենյակ և բացատրություն պահանջել, ինչին ի պատասխան Պատասխանողը հայտնել է, որ դատարանի աշխատակիցները սխալվել են և լավ չեն ուսումնասիրել, ինքը անձամբ կճշտի և մեկ-երկու օրից իրեն կհայտնի: 2015թ. հոկտեմբերին 29-ին Դիմողը զանգել է Պատասխանողին, որին ի պատասխան Պատասխանող փաստաբանը իրեն հանգստացրել է և հայտնել, որ որևէ խնդիր չկա, ավելին՝ վրիպակները ուղղելու համար՝ կապված հայցվորի անվան և հայցադիմումում նշված պատասխանողի հասցեի հետ, դիմում է ներկայացրել դատարան և նոյեմբերի 2-ին այդ թերությունները կվերացվեն և ճշտված կատարողական թերթ կներկայացնի ԴԱՀԿ: Դիմողն իրեն չի հավատացել, քանի որ արդեն համոզվել է, որ նման գործեր առկա չեն եղել դատարաններում: Նախապատրաստողի հարցին ի պատասխան հայտնել է, որ իր հիշելով 06.10.2015թ. սույն կարգապահական գործով որոշումը ստանալուց հետո առանց զանգահարելու այցելել է Պատասխանողին, քանի որ զանգերին հիմնականում խուսափել է պատասխանել, և գրասենյակում Պատասխանողը

հանդիմանել է իր ներկայացված բողոքների համար, խոստացել, որ մի քանի օրից ինքը կներկայացնի փաստաթղթերը: Այնուհետև, իր հիշելով հոկտեմբերի 10-ին թե 11-ին Պատասխանողի զանգով այցելել է գրասենյակ և առձեռն ստացել վճիռը և երկու հայցադիմումների բնօրինակները, որոնք և ներկայացրել է նախապատրաստողին: Բացատրություն տալու օրը՝ 30.10.2015թ-ին նախապատրաստողին ներկայացրել է 21.10.2015թ. թվագրմամբ դիմում, որով կրկին պնդել է հիշատակված վճռի, հայցադիմումների մասին:

06.11.2015թ. Դիմողը նախապատրաստողին ներկայացրել է դիմում, որով ներկայացրել է ՀՀ գխավոր դատախազության 11.09.2015թ. իրեն հասցեագրված պատասխանը և 22.09.2015թ. ՀՀ Կոտայքի մարզի դատախազության մարզի դատախազի տեղակալ Ա. Սարգսյանի պատասխանը: Այդ Պատասխանների բովանդակությունը հանգել է նրան, որ ՀՀ Կոտայքի մարզի դատախազության մարզի դատախազի տեղակալ Ա. Սարգսյանը հայտնել է, որ Դիմողի դիմումը քննարկվել է և այնտեղ նշված փաստերով պարզվել է, որ դրանք չեն համապատասխանում իրականությանը, այսինքն՝ փաստաբան Վահագն Դանիելյանը սահմանված կարգով քաղաքացիական հայց է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, և միաժամանակ նշել է, որ Դիմողը փաստաբանից դժգոհ լինելու հանգամանքով իրավունք ունի խզել պայմանագիրը և ծագած վեճերը լուծել օրենքով սահմանված կարգով:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը</u>

Պատասխանողը 02.11.2015թ. իր ձեռագրով բացատրություն է տվել հարուցված կարգապահական գործի վերաբերյալ, որով առարկել է իր նկատմամբ Դիմողի ներկայացված բողոքների դեմ: Հայտնել է, որ պայմանագրեր է կնքել և պատշաճ ծառայություններ է մատուցել Դիմողի և իր տղայի համար: Դիմողից 29.04.2013թ.-ին ստացել է ծառայությունները կատարելու համար սահմանված 100.000 ՀՀ դրամը, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարման անդորրագիր: Իրենց միջև կնքված թիվ 10-13 պայմանագրով կազմել է հայցադիմում, դիմել է ոստիկանություն պատվիրատուի վերաբերյալ նյութերը ձեռք բերելու համար, հարուցվել է դատական վարույթ: Արդյունքում 30 մարտի 2015թ.-ին թիվ ԵԷԴ/1646/02/14 քաղաքացիական գործով կայացվել է վճիռ, որով հօգուտ Դավիթ Մուրադյանի որոշվել է բռնագանձել է 2000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, 210.000 ՀՀ դրամ և 120.000 ՀՀ դրամ դատական ծախսեր: Այդ վճիռը ստացել է օրինական ուժ, որի հիման վրա վերցրել է կատարողական թերթ և ներկայացրել ԴԱՀԿ: Այդ վճռում և կատարողական թերթում առկա են եղել վրիպակներ, մասնավորապես՝ Դավիթ անվան փոխարեն ի սկզբանե նշված է եղել Դավիթի, իսկ հայցադիմումում նշված պատասխանողի հասցեի բնակարանի համարն է սխալ նշվել: Այժմ դիմել է դատարան վրիպակներն ուղղելու համար և դեռ ծանուցում չի ստացել և ստանալուն պես այդ մասին կհայտնի պատվիրատուին: նշել է, որ գործի ամբողջ ընթացքի մասին Դավիթ Մուրադյանը տեղյակ է եղել, ընդ որում վերջինս հաճախակի է այցելել և շարունակում է այցելել իր գրասենյակ: Զարմացած է, որ այդքանից հետո Դավիթ Մուրադյանն իրենից դժգոհ է: Բացի դա, հայտնել է, որ ծառայություններ է մատուցում նաև Դավիթ Մուրադյանի որդու համար, ինչով պայմանավորված կազմել է հայցադիմում,

ներկայացրել է նրա որդու շահերը դատարանում և այլ մարմիններում, ընդ որում, դրա դիմաց դեռևս պայմանագրով նշված 100.000 ՀՀ դրամ ծառայության գումարը չի ստացել:

Նախապատրաստողի այն հարցին, թե ԵԷԴ/1646/02/14 քաղաքացիական գործով դատավոր Գ. Խաչատրյանի վճիռը և դրա հետ կապված այլ փաստաթղթեր կարող է ներկայացնել, պատասխանել է, որ մինչև 04.11.2015թ. կներկայացնի վճռի բնօրինակը և իր մոտ գտնվող մյուս փաստաթղթերի բնօրինակները:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Գևորգ Դավթյանին **(այսուհետ նաև՝ Նախապատրաստող)**, ով հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, կազմել է եզրակացություն, ըստ որի.

«*Նախապատրաստողս հաստատված համարելով, որ Պատասխանող Փաստաբանի կողմից Դիմողի համար ծառայությունները մատուցելու փաստերը հիմնավորված չեն, Պատասխանող փաստաբանի կողմից մատնանշվել է գործում ներկայացված վճռի պատճե, որը իրականությանը չի համապատասխանել, 22.09.2015թ.ի Կոտայքի մարզի դատախազի տեղակալ Ա. Սարգսյանի պատասխանով հայտնած տեղեկությունները չեն համապատասխանել իրականությանը, Պատասխանող փաստաբանը դատարան հայցադիմումներ է մուտք արել միայն սույն կարգապահական գործի հարուցումից հետո՝ նախապատրաստողիս կողմից Պատասխանողից բացատրություններ վերցնելու օրը՝ 02.11.2015թ.ին»:*

Եզրակացության վերաբերյալ կողմերը առարկություն չեն ներկայացրել:

19.11.2015թ. գործը հանձնվել է Խորհրդին: 19.02.2016թ. սույն կարգապահական գործի վարույթը կասեցվել է մինչև թիվ 461001116 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը: Կարգապահական վարույթը վերսկսվել է 15.12.2016թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի դեկտեմբերի 15-ին, ժամը՝ 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ

գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները (ինչպես նախապատրաստողի ունեցած, այնպես էլ խորհրդի քննության ժամանակ ներկայացված), հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմողի, քաղաքացի Եգոր Դավիթի Մուրադյանի և Պատասխանող փաստաբանի միջև 05.03.2013թ կնքվել է թիվ 05-13 համարի պայմանագիր, որով Պատասխանող փաստաբանը պարտավորվել է Դիմողի և Եգոր Դավիթի Մուրադյանի համար մատուցել փաստաբանական ծառայություններ: Պատասխանող փաստաբանը մինչև 02.11.2015թ. նշված պայմանագրով Փաստաբանական ծառայություններ չի մատուցել:

Նշված փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով, գործում առկա պայմանգրի պատճենով և նախապատրաստողին ի պատասխան տրված Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 11.11.2015թ. թիվ ԴԴ-16/Ե-25983/15 գրությամբ:

2. Դիմողի և Պատասխանող փաստաբանի միջև 29.04.2013թ. կնքվել է թիվ 10-13 համարի պայմանագիր, որով Պատասխանող փաստաբանը պարտավորվել է Դիմողի համար մատուցել փաստաբանական ծառայություններ:Պատասխանող փաստաբանը այդ ծառայությունները չի մատուցել մինչև 02.11.2015թ.:

Նշված փաստը հաստատվում է նախապատրաստողին ի պատասխան տրված Երևան քաղաքի Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 11.11.2015թ. թիվ ԴԴ-16/Ե-25983/15 գրությամբ, գործում առկա պայմանգրի պատճենով, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

3. Փաստաբան Վ. Դանիելյանի ներկայացուցչությամբ և ստորագրությամբ կազմվել է առանց ամսաթվի հայցադիմում՝ ուղղված Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին, մասնավորապես՝ խնդրվել է հոգուտ Դավիթի Եգորի Մուրադյանի քաղաքացի Սարգիս Բաղդասարյանից բռնագանձել 2000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ և 210.000 ՀՀ դրամ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով տոկոսներ, 20.000 դրամ պետական տուրք և 100.000 ՀՀ դրամ փաստաբանի ծախսը, ինչպես նաև միջնորդել է կիրառել հայցի ապահովում: Գումարի բռնագանձման պահանջ ներկայացվել է միայն 02.11.2015թ.:

Նշված փաստը հաստատվում է նախապատրաստողին ի պատասխան տրված Երևան քաղաքի Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 11.11.2015թ. թիվ ԴԴ-16/Ե-25983/15 գրությամբ, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

4. Փաստաբան Վ. Դանիելյանի ներկայացուցչությամբ և ստորագրությամբ կազմվել է առանց ամսաթվի հայցադիմում՝ ուղղված Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին՝ մասնավորապես խնդրվել է հոգուտ Եգոր Դավիթի Մուրադյանի քաղաքացի Մանուկ Սահակի Քոչարյանից բռնագանձել 3000 ԱՄՆ դոլարին

համարժեք դրամ և 210.000 ՀՀ դրամ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով տոկոսներ, 28.960 դրամ պետական տուրք և 150.000 ՀՀ դրամ փաստաբանի ծախսը, ինչպես նաև միջնորդել է կիրառել հայցի ապահովում: Գումարի բռնագանձման պահանջ ներկայացվել է միայն 02.11.2015թ.:

Նշված փաստը հաստատվում է www.datalex.am էլեկտրոնային կայքէջքում առկա տեղեկատվությամբ և կողմերի բացատրություններով:

5. Գործում առկա է 30.03.2015թ. թիվ ԵԷԴ/1646/02/14 Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Խաչատրյանի նախագահությամբ, Դավիթի Եգորի Մուրադյանի հայցով ընդդեմ Սարգիս Բաղդասարյանի գումարի բռնագանձման պահանջի մասին փաստաբան Վ. Դանիելյանի մասնակցությամբ ստորագրված վճռի պատճենը, որով դատարանը որոշել է Սարգիս Բաղդասարայանից հօգուտ Դավիթի Եգորի Մուրադյանի բռնագանձել 2000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, 210.000 ՀՀ դրամ և 120.000 ՀՀ դրամ դատական ծախսեր, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ: *Հիշյալ վճռի առկայության, այն Դատավորի կողմից ստորագրելու, օրինական ուժ ստանալու, դրա հիման վրա կատարողական թերթ ԴԱՀԿ ներկայացնելու և վճռի պատճեն Դիմողին տրամադրելու փաստերը հաստատվում են Պատասխանող փաստաբանի 02.11.2015թ. բացատրությամբ, ինչպես նաև Դիմողի 30.10.2015թ. բացատրությամբ:*

6. 30.03.2015թ. թիվ ԵԷԴ/1646/02/14 Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Խաչատրյանի նախագահությամբ, Դավիթի Եգորի Մուրադյանի հայցով ընդդեմ Սարգիս Բաղդասարյանի գումարի բռնագանձման պահանջի մասին փաստաբան Վ. Դանիելյանի մասնակցությամբ վճիռ առկա չէ:

Նշված փաստը հաստատվում է ինչպես www.datalex.am պաշտոնական կայքէջից, այնպես էլ նախապատրաստողին ի պատասխան տրված Երևան քաղաքի Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 11.11.2015թ. թիվ ԴԴ-16/Ե-25983/15 գրությամբ:

7. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում մինչև 02.11.2015թ.-ի դրությամբ Դավիթ կամ Դավիթի Եգորի Մուրադյանի ընդդեմ Պատասխանող Սարգիս Բաղդասարյանի գումար բռնագանձելու պահանջի մասին հայցադիմում մուտք չի եղել:

Նշված փաստը հաստատվում է նախապատրաստողին ի պատասխան տրված Երևան քաղաքի Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 11.11.2015թ. թիվ ԴԴ-16/Ե-25983/15 գրությամբ:

8. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում մինչև 02.11.2015թ.-ի դրությամբ Դավիթ կամ Դավիթի Եգորի Մուրադյանի ընդդեմ Պատասխանող Սարգիս Բաղդասարյանի հայցադիմումի վերաբերյալ որևէ նյութ կամ տեղեկատվություն առկա չէ, *որը հաստատվում է նախապատրաստողին ի պատասխան տրված Երևան քաղաքի Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր*

իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 11.11.2015թ. թիվ ԴԴ-16/Ե-25983/15 գրությամբ:

9. 30.03.2015թ. թիվ ԵԷԴ/1646/02/14 Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Խաչատրյանի նախագահությամբ կայացվել է վճիռ այլ անձանց միջև գումարի բռնագանձման պահանջով, հայցը բավարարվել է, սակայն վճիռը վերաքննիչ բողոքի հիման վրա ուղղարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Նշված փաստը հաստատվում է նախապատրաստողին ի պատասխան տրված Երևան քաղաքի Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 11.11.2015թ. թիվ ԴԴ-16/Ե-25983/15 գրությամբ:

10. Պատասխանող փաստաբանը պարտավորվել էր մինչև 04.11.2015թ. Նախապատրաստողին ներկայացնել 30.03.2015թ. թիվ ԵԷԴ/1646/02/14 Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Խաչատրյանի նախագահությամբ, Դավիթի Եգորի Մուրադյանի հայցով ընդդեմ Սարգիս Բաղդասարայանի գումարի բռնագանձման պահանջի մասին վճռի բնօրինակը և իր մոտ գտնվող մյուս փաստաթղթերը: Հիշյալ վճռի բնօրինակ և այլ փաստաթղթեր Պատասխանող փաստաբանը չի ներկայացրել: *Այդ փաստերը հաստատվում են Պատասխանող փաստաբանի 02.11.2015թ. բացատրությամբ:*

11. Պատասխանող փաստաբանը 02.11.2015թ. նախապատրաստողին տրված բացատրությամբ հավաստել է, որ պատշաճ ծառայություններ է մատուցել Դիմողին և նրա որդուն, ստացել է Դիմողի գործով 30.03.2015թ. թիվ ԵԷԴ/1646/02/14 Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Խաչատրյանի նախագահությամբ վճիռ, վերցրել է կատարողական թերթ և ներկայացրել է ԴԱՀԿ, վերջերս վրիպակի համար դիմում է ներկայացրել դատարան, ինչպես նաև շարունակում է ծառայություններ մատուցել: Պատասխանող Փաստաբանի հայտնած տեղեկությունները իրականությանը չեն համապատասխանում, *որոնք հաստատվել են ինչպես գործում առկա Դիմողի հայտնած տեղեկություններով, www.datalex.am էլեկտրոնայքի կայքէջով, այնպես էլ նախապատրաստողին ի պատասխան տրված Երևան քաղաքի Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 11.11.2015թ. թիվ ԴԴ-16/Ե-25983/15 գրությամբ:*

12. Դիմողը Պատասխանող փաստաբանի դեմ բողոքներ է ներկայացրել նաև ՀՀ գլխավոր դատախազություն, որին ի պատասխան 11.09.2015թ. ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա. Հարությունյանը գրություն է ուղղարկել Կոտայքի մարզի դատախազ Վ. Միլիտոնյանին, որով քննարկման է ուղարկել Դավիթ Մուրադյանի դիմումով փաստաբան Վահագն Դանիելյանի կողմից իր շահերին հակասող գործողություններ կատարելու վերաբերյալ հարցը: 22.09.2015թ.ի ՀՀ կոտայքի մարզի դատախազի տեղակալ Ա. Սարգսյանը պատասխան գրություն է ուղղարկել Դավիթ Մուրադյանին՝ հայտնելով, որ Դիմողի փաստարկներն իրականությանը չեն համապատասխանում՝ փաստաբան

Վ. Դանիելյանը սահմանված կարգով քաղաքացիական հայց է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, միաժանակ պարզաբանելով, որ փաստաբանի ծառայություններից դժգոհ լինելու դեպքում կարող է խզել նրա հետ կնքած պայմանագիրը, իսկ ծագած վեճերը լուծել օրենքով սահմանված կարգով: Դատախազի տեղակալի կողմից հայտնած տեղեկությունները իրականությանը չեն համապատասխանում, *որը հավաստվում է նախապատրաստողին ի պատասխան տրված Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 11.11.2015թ. թիվ ԴԴ-16/Ե-25983/15 գրությամբ, այսինքն՝ Պատասխանող փաստաբանը որևէ հայցադիմում չի ներկայացրել դատարան:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի 14.12.2016թ. տեղեկանքի համաձայն՝ Վահագն Դանիելյանը փաստաբանական գործունեության թիվ 425 արտոնագիրը ստացել է 15.04.2002թ:. Վահագն Դանիելյանի նկատմամբ 2006-2016թթ ժամանակահատվածում 7 կարգապահական վարույթով կայացվել են որոշումներ և առկա է մեկ ընթացիկ վարույթ՝

- Խորհրդի 07.07.2009թ. թիվ 16/2, 20.01.2010թ. թիվ 1/4, 09.08.2011թ. թիվ 16/3 որոշմամբ Վահագն Դանիելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) կարճվել են:
- Խորհրդի 14.02.2014թ. թիվ 16/1 որոշմամբ Վահագն Դանիելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը (Կանոնագրքի 2.2.2 և 3.2.2 ենթակետերի հատկանիշներով) կարճվել է:
- Խորհրդի 21.03.2014թ. թիվ 27ԿԳ-1 որոշմամբ Վահագն Դանիելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը (Կանոնագրքի 2.2.1 և 3.6.1 ենթակետերի հատկանիշներով) կարճվել է:
- Խորհրդի 03.03.2016թ. թիվ ԿԳ/51-Ա որոշմամբ Վահագն Դանիելյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն, որը մարվել է.
- Խորհրդի 06.10.2016թ. թիվ ԿԳ/115-Ա որոշմամբ Վահագն Դանիելյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն, որը մարված չէ;

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Գնահատելով գործում առկա ապացույցները, խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Դանիելյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Կարգապահական վարույթը հարուցվել է Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5

և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը սահմանում է փաստաբանի վարքագծի կանոնները և փաստաբանական էթիկայի սկզբունքները:

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, *իր վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ* (երբեմն իրար հակասող)՝

- վստահորդի նկատմամբ;

- դատարանների և այլ իրավապահ մարմինների առաջ, որտեղ փաստաբանը պաշտպանում է գործը և հանդես է գալիս վստահորդի անունից;

- իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես;

- հասարակության նկատմամբ, որի համար ազատ և անկախ մասնագիտության առկայությունը՝ համակցված այդ մասնագիտությանը վերաբերող կանոնների նկատմամբ հարգանքով, մարդու իրավունքների պաշտպանության կարևոր միջոց է՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության հզորության և հասարակության այլ շահերի:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Սույն կարգապահական գործով ներկայացված փաստաթղթերի և նյութերի համաձայն՝ փաստաբանական ծառայությունների մատուցման թվով 2 պայմանագիր է կնքել Պատասխանողի հետ, համաձայն որի Պատասխանողը պարտավորվել է փաստաբանական ծառայություններ մատուցել, այն է՝ կազմել հայցադիմում և դատական ներկայացուցչություն իրականացնել հօգուտ Դիմողի և իր որդու՝ Եգոր Մուրադյանի: Թիվ 05-13 պայմանագիրը կնքվել է 05.03.2013 թվականին, իսկ թիվ 10-13 պայմանագիրը կնքվել է 29.04.2013 թվականին:

Նշված պայմանագրային պարտավորությունները, այսինքն՝ համապատասխան հանձնարարության պատշաճ կատարմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները Դիմողի կողմից կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմում ներկայացնելու օրվա դրությամբ չեն կատարվել:

Վկայակոչված իրավակարգավորման էությունից բխում է, որ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ՝ կատարելով պայմանագրով նախատեսված հանձնարարության

իրականացմանն ուղղված գործողություններ:

Սույն գործում առկա փաստերի վերլուծությունից Խորհուրդը հանգում է այն հետևության, որ Պատասխանողը խախտել է Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջը, քանի որ պայմանագրերը կնքելուց հետո, իսկ դրանք կնքել է համապատասխանաբար՝ 05.03.2013 թվականի և 29.04.2013 թվականին, ձեռնամուխ չի եղել իր պայմանագրային պարտավորությունները կատարելուն, այն է՝ համապատասխան հայցադիմում չի ներկայացրել դատարան գումարի բռնագանձման պահանջների մասին:

Ավելին, Դիմողը Պալատի նախագահին դիմել է 28.08.2015 թվականին, իսկ Պատասխանողը նշված հայցադիմումները ներկայացրել է միայն 02.11.2015 թվականին, այսինքն միայն այն ժամանակ, երբ արդեն իսկ իմացել է կարգապահական գործի առկայության վերաբերյալ:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Դիմողի ներկայացրած փաստերը հիմնավորող ապացույցների վերաբերյալ, մասնավորապես Դիմողին վճիռ տրամադրելու և այլն, Պատասխանողը որևէ հակառակը հիմնավորող ողջամիտ փաստարկ չի ներկայացրել, անգամ ընդունելով այն հանգամանքը, որ արդեն իսկ նշված հանձնարարություններից մեկին վերաբերող վերջնական դատական ակտն առկա է, այնուհետև նշել է, որ իրեն Դիմողն է խնդրել որպեսզի ինքը գրի, որ այդ վճիռն ինքն է տվել Դիմողին:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Նշված կանոնակարգումը ևս վկայում է Պատասխանողի այն վարքագծի կանոնի վերաբերյալ, որ փաստաբանն իր ստանձնած հանձնարարությունը պետք է կատարի պատշաճ և բարեխիղճ, իսկ եթե անձնական կամ այլ սուբյեկտիվ և օբյեկտիվ հանգամանքներ թույլ չեն տալիս հանձնարարությունն ստանձնել, ապա վերջինս պետք է հրաժարվի այն ընդունելուց:

Վարույթի շրջանակներում հիմնավորվում է այն հանգամանքը, որ Պատասխանողը ժամանակին և բարեխիղճ չի ապահովել հանձնարարության կատարումը, որն օբյեկտիվորեն դրսևորվել է համապատասխան հայցադիմում չներկայացնելով, այսինքն՝ անգործությամբ:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Այն հանգամանքը, որ Պատասխանողը միայն կարգապահական գործի առկայության վերաբերյալ տեղեկանալուց հետո է հայցադիմումները ֆիզիկապես մուտք արել դատարան, արդեն իսկ վկայում են վերջինիս կողմից Կանոնագրքի նշված իրավակարգավորման խախտման առկայության մասին, այսինքն՝ վերջինս ժամանակին և ջանասիրաբար չի պաշտպանել իր վստահորդի ենթադրյալ խախտված իրավունքները, որոնց պաշտպանությունն իրականացնելու համար վերջինս պարտավոր էր հայցադիմում ներկայացնել դատարան, բայց ոչ մի քանի ամիս անց:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման

ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Առկա փաստերի համակցությունն արդեն իսկ բավարար են հանգելու այն օրինաչափ հետևության, որ Պատասխանողը չէր կարող պատշաճ կատարել իր՝ վստահորդին գործի ընթացքի վերաբերյալ կանոնավորապես տեղեկացնելու պարտավորությունը, հետևաբար իր անգործությամբ խախտել է նաև վկայակոչված կանոնը:

Նման պայմաններում Խորհուրդը փաստում է որ պատասխանող Վահագն Դանիելյանի արարքում առկա է Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներ:

7.2. Կարգապահական տույժի ընտրությունը

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը:

Վարույթի կարգի 3-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ *Կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական վարույթն իրականացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործողություններն իրականացվում են Պալատի առջև՝* ***փաստաբանների հավասարության սկզբունքի հիման վրա***: Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ *Փաստաբաններին կարգապահական տույժի ենթարկելիս Պալատի խորհուրդը պարտավոր է ղեկավարվել* ***միատեսակ չափանիշներով***:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ նշված գործառույթը իրականացնելով վերջինս լուծում է ինստիտուցիոնալ կարևորագույն խնդիր՝ ապահովում է փաստաբանների վարքագծի կանոնների միատեսակ կիրառությունը:

Վարքագծի կանոնների կիրառումը պարտադիր և անհրաժեշտ գործոն է, քանզի փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարության ապահովման համար: Փաստաբանի վրա դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտականություններ, որոնց շարքում հատուկ տեղ է զբաղեցնում փաստաբանի մասնագիտական հեղինակությունը:

Հանդիսանալով հասարակության հատուկ սուբյեկտ՝ փաստաբանը կոչված է ապահովել անձանց իրավունքների պաշտպանությունը, դրանով իսկ լրջագույն դերակատարում ունենալով արդարադատության իրականացման աջակցման գործընթացում:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ*:

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Դանիելյանի նկատմամբ պետք է կիրառի տուգանք տույժի տեսակը և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետի, 39.9.-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 31-րդ հոդվածների պահանջներով,

Պալատի խորհուրդը,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Վահագն Դանիելյանին (արտոնագիր թիվ 425) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:***
2. ***Փաստաբան Վահագն Դանիելյանի (արտոնագիր թիվ 425) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին սույն որոշումը ստանալու պահից 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, ութ ակադեմիական ժամ ժամաքանակով:***
3. ***Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան